



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՄԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄՆ
ՈՒ ՃՐԱԳԱԼՈՅՑ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Աւագ Շաբթուան վերջին երկու օրերը նուիրուած են մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի ամենէն տխուր յիշատակներուն՝ անոր կրած չարչարանքներուն, խաչելութեան, թաղման, սակայն նաեւ անոր Ա. Յարութեան աւետիսին նախապատրաստութեան:

Աւագ Ուրբաթ օրը, մեր Թեմի բոլոր եկեղեցիները յատուկ արարողութիւններով նշեցին Քրիստոսի թաղման յիշատակը:

Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 10 Ապրիլի երեկոյեան, Օրէնճ Բաունթիի Ա. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Թաղման արարողութեան: Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը նշեց, որ այս արարողութեամբ կը յիշենք Աստուածորդւոյն աշխարհի առաքելութեան ամենէն հիմնական պատճառը. Ան մարդկութեան մեղքերը ուսին առած, յանձն առաւ խաչը բարձրանալ ու մեղաւոր մարդուն համար իր կեանքը նուիրել: Ան յայտնեց, որ մեզի կը մնայ հաւատալ ու ապաւինիլ Յիսուսի, ու մեր արարքներով ու գործերով ցոյց տալ, թէ իբրեւ բարի զաւակները Երկնաւոր Հօր՝ մենք ալ անհուն սեր ունինք իրեն հանդէպ, պատրաստ ենք մեր կեանքը կերտելու համաձայն իր պատուիրաններուն:

ՃՐԱԳԱԼՈՅՑ

Ա. Յարութեան տօնի նախօրեակին, Շաբաթ երեկոյ, Ճրագալոյցին, Առաջնորդ Սրբազանը Ա. Պատարագը մատուցանեց Փասատինայի Ա. Սարգիս եկեղեցւոյ մէջ ու հաւատացեալներուն տուաւ Քրիստոսի յարութեան աւետիսը: Ան աղօթք բարձրացուց առ Աստուած, որ իր Միածինին Ա. Յարութեան ոգիով հարստացնէ բոլոր հաւատացեալներուն կեանքը, յարութեան ու վերականգնումի կամքը տարածէ մեր ժողովուրդի ու հայրենիքին վրայ:

GOOD FRIDAY AND EASTER EVE SERVICES

On the evening of Friday, April 10th, 2009, the burial of Jesus Christ was commemorated with services in all Prelacy Churches. H.E. Archbishop

Moushegh Mardirossian, Prelate, officiated over the service at Forty Martyrs Church in Orange County and delivered his message on this solemn occasion.

The Prelate stated to the faithful that this service is a reminder to us all of the primary reason for Jesus' earthly ministry, which was to take on our sins and our burdens and to sacrifice His life for our salvation. He concluded with a call to the faithful that we must place our absolute faith and trust in Him, live God-pleasing lives according to His commandments, and demonstrate our love for Him through our deeds and actions

On the evening of Saturday, April 11th, the Prelate celebrated Easter Eve Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena. In his sermon, the Prelate prayed for the renewing and reviving message of the Glorious Resurrection of Jesus Christ to enrich the lives of our faithful and our nation.